ՀՀ ԿԳՄՍՆ

«ՄԱՐՏՈՒՆՈՒ Տ.ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Ուսուցչի համագործակցությունը սովորողների ծնողների , սովորողների կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում

Ուսուցիչ՝ Արմինե Մնացականյան

Խումբ՝2-րդ

Ղեկավար՝ Կ.Օհանեսյան

Դպրոց՝ Վայքի ավագ դպրոց

Վայք 2023

Բովանդակություն

Ներածություն 3

Գլուխ 1 ՈՒսուցչի և ծնողների արդյունավետ փոխազդեցության էությունը, կառուցվածքը, յուրահատկությունը և մանկավարժա-հոգեբանական պայմանները 5

Գլուխ 2 Ուսուցչի և ծնողների արդյունավետ փոխազդեցության մշակումը և իրականացումը 8

Գլուխ 3 Ուսուցչի և ծնողների փոխազդեցության պլանի իրականացվող արդյունքների գնահատումը 11

Ուսուցչի և ծնողների փոխազդեցության տարեկան պլան 12

Հավելված 1 Հարցաթերթ (անկետա) ծնողների համար

Ծնողների և ուսուցչի փոխազդեցության որակի ուսումնասիրում 14

Հավելված 2 Հարցաթերթ (անկետա) սովորողների համար 16

Եզրակացություն 18

Գրականության ցանկը 19

Ներածություն

Ժամանակակից երեխան ձգտում է լինել կյանքում հաջողակ և փորձում կայանալ արդեն դպրոցական տարիքից սկսած: Ուսուցչի և ծնողի կարևորագույն խնդիրներից մեկն է՝աջակցել նրան այդ դժվար ճանապարհին, փորձելով ամեն կերպ օգտակար լինել այդ հարցում: Ուսուցչի համագործակցությունը սովորողների ծնողների կամ նրանց օգնական ներկայացուցիչների հետ կարող է արդյունավետ լինել միայն այն դեպքում, երբ նրանք կդառնան համախոհներ, ինչը թույլ կտա ավելի լավ ճանաչել երեխային տարբեր իրավիճակներում և արդյունքում օգնել ծնողներին ավելի լավ հասկանալ երեխայի առանձնահատկությունները: Ուսուցիչ-ծնող կապը նաև հետագայում կդառնա երեխայի արժեհամակարգի ձևավորման և բացասական արարքների հաղթահարման բախկացուցիչ մասը: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է ստեղծել համատեղ գործունեության և կառուցողական հարաբերությունների դաշտ, որտեղ չկան շատ կամ քիչ իմացողներ: Կան հետաքրքրվածներ, որոնք համախմբված են մեկ հարցի շուրջ:

Ուսուցչի և ծնողների համագործակցության ընթացքում ի հայտ են գալիս բազմաթիվ խնդիրներ, որոնք պահանջում են օպտիմալ լուծումներ: Եվ այստեղ շատ կարևոր է նշել հենց ուսոցչի կողմից տվյալ իրավիճակին ճիշտ տիրապետումը և այդ իրավիճակից ելք գտնելը, հասնելով վերջնական ցանկալի արդյունքին:

<u>Արդիականությունը՝</u>

Ներկայիս առանցքային խնդիրներից է՝

1. Որոնք՞են ուսուցչի և ծնողների արդյունավետ և անարդյունավետ փոխազդեցության հատկանիշները:

2. Որոնք՞են ուսուցչի և ծնողների անարդյունավետ փոխազդեցության պատճառները:

3. Ինչպիսի՞ մանկավարժա-հոգեբանական պայմաններում է հնարավոր արդյունավետ փոխազդեցությունը:

Այս հարցերը առաջացնում են հետազոտության անհրաժեշտություն, որի հիմնական նպատակը ձևակերպվում է հետևյալ կերպ՝որոնք են ուսուցչի և ծնողների արդյունավետ փոխազդեցության էությունը, կառուցվածքը, յուրահատկությունը և մանկավարժա-հոգեբանական պայմանները:

Նպատակի իրականացման համար անհրաժեշտ է լուծել մի շարք խնդիրներ՝

1.Բացահայտել փոխազդեցության մասնակիցների հետաքրքրությունները և կարիքները:

2.Ստեղծել անհրաժեշտ պայմաններ հաջող համատեղ գործունեության կազմակերպման համար:

3.Մշակել և իրականացնել դպրոցի և ընտանիքի փոխազդեցության ծրագիր:

<u>Ակնկալվող արդյունքները՝</u>

1.Ծնողների ներգրավվացությունը ակտիվ համագործակցության մեջ:

2.Աշակերտների դպրոցական կյանքին ակտիվ մասնակցությունը:

Գլուխ 1

ՈՒսուցչի և ծնողների արդյունավետ փոխազդեցության էությունը, կառուցվածքը, յուրահատկությունը և մանկավարժա-հոգեբանական պայմանները

Ուսուցչի և ծնողների փոխազդեցությունը կարող է լինել արդյունավետ և ոչարդյունավետ: Արդյունավետ լինելու համար պետք է ստեղծել շփման, հարաբերությունների կայուն և արդյունավետ պրոցես:

Ուսուցչի և ծնողների արդյունավետ փոխազդեցությունը ունի հետևյալ հատկանիշները՝

1.Հաղորդակցական՝ուսուցիչը պետք է իմանա երեխաների և նրանց ծնողների հետ շփման ձևը և տիրապետի մանկավարժի շփման կանոններին, հնարքներին: Նաև ուսուցիչը պետք է օժտված լինի համապատասխան հաղորդակցական կարողունակություններով, մշտապես ունենա տեղեկություն երեխայի և ծնողի վերաբերյալ, կարողանա ցուցաբերել կոնֆլիկտների լուծման կառուցողական մոտեցում:

2.Հարաբերություն՝ընտանիքի արժեքի կարևորումը, որպես մանկավարժական համակարգի բաղկացուցիչ մաս, ծնողների դրական փորձի վրա հենվելը, ընտանիքի հեղինակության բարձրացումը, փոխազդեցության դեմոկրատական ոճը, միջանձնային հարաբերությունների առժևորումը:

3.Կապ՝մշտական երկկողմանի կապի ապահովումը, ընտանիքի հետ փոխազդեցության վերլուծության կարողությունը:

Ուսուցչի և ծնողի արդյունավետ փոխազդեցության մանկավարժա-հոգեբանական պայմաններն են՝

1.Ուսուցիչը պետք է կարևորի ծնողի հետ փոխազդեցության անհրաժեշտությունը, որպես դաստիարակության արդյունավետ նպատակ:

2.Ծնողների փոխազդեցության միջանձնային և անհատական ձևերի իրականացումը:

3.Ուսուցչի հաղորդակցական կարողությունների բարձր մակարդակը:

Ուսուցչի և ծնողի արդյունավետ փոխազդեցության կառուցողական մոդելը բաղկացած է իրար հետ փոխկապակցված տարրերից՝շփում, հարաբերություն, կապ:

Ուսուցչի և ծնողի փոխազդեցության կազմակերպումը իրականացվում է հետևյալ ողղություններով՝

- սովորողի ընտանիքի դաստիարակության ձևերի և մթնոլորտի հետազոտությունը

- ծնողներին լուսաբանումը մանկավարժական տեսակետից

- ծնողների ներգրավվածությունը կոլեկտիվ աշխատանքների նախապատրաստման և անցկացման գործընթացին

- ծնողական խորհրդի հետ մշտական կապը

- Անհատական աշխատանք ծնողների հետ

- Պարբերաբար տեղեկացնել ծնողին երեխայի առաջադիմության, դաստիարակության և զարգացման գործընթացի մասին:

Ընտանիքների հետազոտման մեթոդներն են՝

Դպրոցին մշտապես անհրաժեշտ է տեղեկություն ընտանիքի մասին, որպեսզի ընտրվի ճիշտ նպատակ, որը կհամապատասխանի ընտանիքի պահանջներին, և որի միջոցով հնարավոր կլինի հասկանալ սովորողի զարգացման սցենարը, այդ թվում դրա շեղումները: Այսպիսով, տեղեկատվության առկայությունը մեզ թուլ է տալիս մշակել ծնողների հետ փոխազդեցության մարտավարություն՝

1.Հետազոտում

2.Համակցված հետազոտում (միանում են ծնողները, դասարանի ակտիվ աշակերտները, սոց. մանկավարժը)

3.Անհատական զրույցներ

4.Թեստավորում

5.Հարցաթերթի լրացում

6.Հայտորոշում

7.Իրավիճակային խաղեր

8.Երեխաների խոսքի և մտքի վերլուծություն

Որպեսզի ճիշտ իրականացվի ուսուցչի և ծնողի փոխազդեցությունը, անհրաժեշտ է նաև ընտրել փոխազդեցության մի քանի արդյունավետ ձևեր՝

-Թեմատիկ ծնողական ժողովների կազմակերպում

-Ընտանիքի և դասարանի հետ կապված տոների կազմակերպում

-Ընթերցանության օրերի կազմակերպում

-«Բաց դռների օր»

-Ընտանեկան արվեստի ցուցահանդես

-Ֆոտոցուցահանդես «Ընտանեկան ալբոմ», «Իմ ընտանիքի մասնագիտությունը», «Մեկ օր մայրիկիս կյանքից»

-Նախագծային աշխատանք

-Ծնողական կոնֆերանս

Գլուխ 2

Ուսուցչի և ծնողների արդյունավետ փոխազդեցության մշակումը և իրականացումը

Դեռ վաղ դպրոցական շրջանում ընտանիքի ազդեցությունը երեխայի զարգացման կարևոր գործոններից է հանդիսանում: Եվ հենց այդ պահից սկսած շատ ծնողներ զգում են ուսուցչի խորհրդի կարիքը: Ուսուցիչն էլ իր հերթին պետք է գիտակցի, որ դասարանի հետ աշխատանքը չի լինի արդյունավետ առանց ծնողների ակտիվ մասնակցության: Շատ ավելի արդյունավետ կլիներ այն սկսել դեռ կրտսեր, այնուհետև շարունակել միջին և ավագ դպրոցներում: Դա թույլ կտար ամուր կապ ստեղծել ամբողջ ուսումնական գործունեության ընթացքի յուրաքանչյուր փուլում:

Այդ իսկ պատճառով, ես փորձեցի ստեղծել բարենպաստ պայմաններ, որոնք թույլ կտան նույն ուղղությամբ արդյունավետ աշխատեն դպրոցը եվ ընտանիքը երեխայի զարգացման, առաջադիմության բարձրացման, արժեհամակարգի ձևավորման շուրջ:

Անհրաժեշտ էր ընտանեկան կյանքը հագեցնել տպավորիչ, էմոցիոնալ միջոցառումներով, ուսումնառության պրոցեսում փնտրել և գտնել երեխայի վրա ազդեցության արդյունավետ մեթոդներ, սովորեցնել ծնողներին տեսնել և հասկանալ փոփոխությունները, որոնք տեղի են ունենում երեխաների հետ, կիսվեն իրենց հետազոտություններով և անցկացնեն գործունեության անդրադարց:

Ես գտնում եմ, որ ամենակարևոր սկզբունքներից է՝ երկխոսության գործոնը, որը դիտվում է որպես ուսուցիչ-ծնող հարաբերությունների իրականացման պայման: Ընդորում տվյալ սկզբունքը ենթադրում է փոխազդեցության բոլոր մասնակիցների ակտիվությունը:

Իսկ այդ ակտիվությունը ողղված է համատեղ փոխազդեցության վրա , այլ ոչ թե մասնակիցներից մեկի անձին:

Պարզենք թե որո՞նք են այն բարենպաստ պայմանները, որոնք կապահովեն արդյունավետ փոխազդեցություն ոսուցչի և ծնողի միջև:

1.Ծնողները հանդես են գալիս ոչ միայն բարենպաստ պայմաններ ապահովող, այլև երեխաների ինտելեկտուալ, բարոյական, ֆիզիկական և հոգեբանական զարգացման գործընթացի անմիջական և հավասարազոր մասնակիցներ:

2.Ընտանիքների նկատմամբ անհատական և տարբերակված մոտեցման իրականացում:

3.Արդյունավետ հսկողության ստեղծում, որը հենված է հայտորոշման մեթոդի վրա, և իրականացվում է ուսուցման և դաստիարակման պրոցեսներում՝ փուլերով:

4.Հայտորոշման արդյունքում ստեղծված դժվարությունների և շեղումների կարգավորում:

Ուսումնական տարվա սկզբում ես անցկացրեցի ընտանիքների հետազոտություն՝ առկա խնդիրների հայտնաբերման նպատակով:

Առաջին հերթին հայտնաբերվեցին սովորողների ֆիզիկական և հոգեբանական պատրաստակամությունը դպրոց հաճախելուն: Արդյունքում հայտնաբերեցի հիմնական խնդիրը՝ սովորողների 10 % պատրաստ չեն դպրոց հաճախելու:

Որոշեցի ծնողներին ընդգրկել հետազոտական աշխատանքի մեջ, որը իր հերթին կստեղծի պայմաններ, որտեղ երեխաները և իրենց ծնողները կկարողանան լուծել վերը նշված մի շարք կարևոր խնդիրներ:

Մեր առաջին նպատակն էր, որ երեխաները ներկայացնեն իրենց կյանքից մի պատմություն ֆոտոշարքի տեսքով՝ «Ինչպես ՞եմ ես անցկացրել ամառային արձակուրդները» , «Տարվա աշուն՝կյանքի աշուն» – տատիկների և պապիկների մասին:

Հաջորդ աշխատանքի ձևը իրենից ներկայացնում էր աշխատանք ինֆորմացիայի հետ՝

«Իմ տոհմածառը» , «Գիտելիքի շտեմարան» , «Ընտանեկան գրադարանների ցուցադրում»:

Այս փոխազդեցության շարունակությունը պետք է հանդիսանար ողջ ուսումնական պրոցեսի վերջնարդյունքը՝ «Ինչպիսին էի տարվա սկզբում ես և ինչպիսին եմ դարձել հիմա » (երեխայի անդրադարձը), «Իմ երեխան մեծանում է և փոխվում» (ծնողի անդրադարձը) և «Ավագ դպրոցի շրջանավարտը ինչպիսին պետք է լինի» (երեխա-ծնող- ուսոցիչ անդրադարձ):

Գլուխ 3

Ուսուցչի և ծնողների փոխազդեցության պլանի իրականացվող արդյունքների գնահատումը

Հետազոտման արդյունքների գնահատումը իրականացրեցի երկու ձևով՝

1) Ծնողների համագործակցման արձագանքը, որը ուսումնասիրվելու եր հարցադրման միջոցով (հավելված 1)

2) Աշակերտների արձագանքը դպրոցում իրենց կենսագործունեության վերաբերյալ

(հավելված 2)

Վերլուծելով ստացված արդյունքները, որոշեցի սովորողի վերաբերմունքը դպրոցին և դպրոցական կյանքին, օգտագործելով 1 սանդղակը: Ճիշտ պատասխանի հետ համընկման դեպքում ստացա 1 միավոր: Միջին միավորը ըստ սանդղակի `3 է: Եթե ցուցանիշը 3-ից ցածր է, ապա երեխան տվյալ ոլորտում ունի խնդիր, իսկ դա հետևաբար, ցածր մակարդակ է:

Ծնողների թեստավորման ժամանակ կիրառվեց 7 չափանիշ՝ դրանցից մի մասը գնահատում են ծնողի վերաբերմունքը դպրոցական կյանքին, իսկ մյուս մասը՝ փոխազդեցության պատրաստակամությունը:

Վերլուծեցի ըստ դրական, միջին և բացասական չափանիշների, որը թույլ տվեց ոչ միայն տալ ընդհանուր գնահատական, այլև տեսնել այն դինամիկան, որը ունի յուրաքանչյուր չափանիշ:

	Ծնողների վերաբերմունքի մակարդակները և նրանց հակվածությունը համագործակցության	Աշակերտների արձագանքը դպրոցում իրենց կենսագործունեության

	ցածր	միջին	բարձր	ցածր	միջին	բարձր
Առաջնային հայտորոշում	3%	27%	70%	9%	37%	34%
Ամփոփիչ հայտորոշում	3%	13%	84%	5%	29%	67%

Արդյունքները ամփոոփելիս երևաց դրական դինամիկա, որը նպաստեց ուսումնական և դաստիարակչական պրոցեսի մասնակիցների արդյունավետ փոխազդեցությանը: Դրա հիման վրա ես կազմեցի դասղեկի աշխատանքային տարեկան պլան:

Ուսուցչի և ծնողների փոխազդեցության տարեկան պլան

Նախատեսված աշխատանք	Վերջնարդյունքներ
Սեպտեմբեր	
1.Անհատական հանդիպումներ, աշակերտների ուսուցման և դաստիարակման ընթացքում առաջացող հարցերի լուծման համար: 2.Զրույց Ընտանիքը և դպրոցը որպես համագործակցողներ երեխայի դաստիարակման պրոցեսում:	Միասնական պահանջների ձևավորում: Փոխազդեցության բովանդակության որոշում ուսումնական տարվա ընթացքում:
Հոկտեմբեր	
1.Առաջին ծնողական ժողով՝Տարվա սկզբում նախատեսվող ծրագրի ներկայացում. Օրվա ռեժիմի կազմակերպում : 2.Ծնողների տեստավորում հարցաթերթի միջոցով	Ծնողների ներգրավումը դաստիարակության և սովորելու պրոցեսի մեջ. անդրադարձ
Նոյեմբեր	Արդյունավետ և լիարժեք

1.Ծնողների հանդիպումը հոգեբանի հետ. 2.Անհատական զրույցներ ծագող հարցերի շուրջ **Դեկտեմբեր**	համագործակցության ապահովումը ծնողների հետ ուսումնադաստիարակչական պրոցեսում:
1.Ծնողական այցելությունների օր դասերի և միջոցառումների այցելության համար: 2.Ամանորյա պարահանդեսի համատեղ կազմակերպում և անցկացում:	Ումնա-դաստիարակչական շրջանակի ընդլայնում:
Հունվար	
1.Ծնողական ժողով: 2.Անհատական զրույցներ դժվար դաստիարակվող երեխաների ծնողների հետ : 3.Բանակի օրվա կապակցությամբ հայրերի, եղբայրների այցելությունը դպրոցական միջոցառմանը:	«Երեխա-ծնող-ուսուցիչ» միասնական մթնոլորտի ստեղծում: Հայրենասիրական դաստիարակության ամրապնդում:
Փետրվար	
1.Կլոր սեղան- ի կազմակերպում, դաստիարակչական հարցերով նեղ մասնագետների ներգրավվում:	Գեղագիտական դաստիարակության զարգացում:
Մարտ	
1.Մարտի 8 կապակցությամբ մայրերի, քույրերի և տատիկների ներգրավվումը դպրոցական միջոցառմանը: 2.Անհատական զրույցներ ծնողների հետ, դժվար դաստիարակվող երեխաների	Գեղագիտական դաստիարակության զարգացում:

հետ:	
Ապրիլ	
1.Դասախոսություն «Փոխհարաբերությունները ընտանիքում» թեմայով: 2.Անհատական զրույցներ ծնողների հետ:	Արդյունավետ և լիարժեք ուսումնադաստիարակչական պրոցեսի ապահովում:
Մայիս	
1.Ծնողական ժողով՝ ուս.տարվա համատեղ աշխատանքի ամփոփում: 2. «Վերջին զանգ» միջոցառման կազմակերպում և անցկացում:	Ժամանակին ծնողների հետ կապի ապահովում, անորակ ումնա-դաստիարակչական պրոցեսի կանխարգելման նպատակով:

Եզրակացություն

Այսպիսով հասկացանք, որ տարվա սկզբին կատարված հետազոտությունները ցույց տվեցին ցածր արդյունք: Մեկ ամիս շարունակ ծնողների հետ կազմակերպվում էին հանդիպումներ, քննարկումներ: Պարբերաբար ծնողները իրազեկվում էին երեխաների հաճախումների և առաջադիմության վերաբերյալ: Աշխատանքը կատարվում էր ըստ նախագծված պլանի: Սեպտեմբերի 28-ին կատարվեց ևս մեկ հարցում, որի արդյունքում ստացվեցին նոր տվյալներ, որոնք արդեն գրանցում էին դրական աճ ծնողների վերաբերմունքին դպրոցի նկատմամբ:

Ստացվում է, որ եթե հենց տարվա սկզբից ճիշտ պլանավորվի ուսուչի և ծնողի համագործակցությունը, ապա դրական արդյունքը աստիճանաբար կերևա: Որն ել կհամարվի ամուր և երկարատև փոխազդեցության հիմք:

Աշխատանքը ծնողների հետ միշտ էլ համարվել է մանկավարժական գործունեության մեջ դժվար լուծվող խնդիրներից մեկը: Աշակերտների ծնողները համարվում են ուսումնական գործընթացի հիմնական մասնակիցները, որոնք կիսում են մանկավարժական գործընթացի պատասխանատվությունը և ջանքերը:

Ծնողը պետք է զգա, որ դպրոցը ունի իր կարիքը, և որ դպրոցը սիստեմատիկ և մշտապես նրա հետ աշխատում է: Եվ դա չպետք է լինի ուղղակի ընտանիքի հետ կապված միջոցառումների ցանկ, այլ պեքք է լինի կոմպլեկսային, պլանավորված համագործակցություն:

Աշխատանքը պետք է իրականացվի ոչ թե տոնից տոն, այլ ունենա յուրօրինակ բնույթով գործողությունների շրջանակ, որտեղ ծնողները ուսուցչի հետ աստիճանաբար մտնում են փոխազդեցոըթյան մեջ:

Այսպիսով, դպրոցում ուսուցչի և ծնողի փոխազդեցության արդյունքը պետք է լինի՝

-Ուսուցչի և ծնողների փոխազդեցության մակարդակի բարձրացում:

-Սովորողների մոտ ինքնագնահատականի բարձրացում և դպրոցի նկատմամբ դրական վերաբերմունքի ձևավորում:

Օգտագործվող գրականության ցանկը

1. В. А. Сухомлинский «Родительская педагогика». –М..1977г..

2. В. А. Сухомлинский «Родительская педагогика». Собрание сочинений. 3том, М..,1981г.

3.И. Фридман. «Ребёнок между обществом и семьёй: Семья и школа»-2002, Том.11

4.Фридман Л.. «Школа и родители. Классрук».-1998.-Том.5

5.Семёнов Г.С.. «Организация воспитательной деятельности в школе». Школьная прессаլ,2002

Հավելված 1

Հարցաթերթ (անկետա) ծնողների համար

Ծնողների և ուսուցչի փոխազդեցության որակի ուսումնասիրում

1.Ինչպիսի՞ հարաբերություններ են առկա մեր դպրոցում ծնողների և աշակերտների միջև

-բարյացակամ

-վստահելի

-անտարբեր

-ոչ հաճելի

-վիճելի

2.Կան՞ արդյոք Ձեր և ուսուցչի կողմից տրվող միասնական պահանջներ երեխայի նկատմամբ

-Այո - Ոչ այդքան -Ոչ

3.Արդյոք հաճախու՞մ եք պատշաճ կերպով ծնողական ժողովները

-մշտապես

-երբեմն

-ոչ

-եթե չեք հաճախում, ապա ինչու՞

4.Օգտակար են արդյոք՞ ծնողական ժողովները ձեր երեխայի դաստիարակության հարցում

-Այո -Ոչ այդքան - Ոչ

5. Ստանում եք արդյոք՞ ձեր երեխայի դաստիարակության հետ կապված բավականաչափ տեղեկություն դասղեկի հետ անհատական զրույցներից

-Այո -Ոչ այդքան -Ոչ

6.Հաճախ՞ եք մասնակցում դպրոցական միջոցառումներին

-Մշտապես -Երբեմն -Ոչ

7. Պատրաստ եք՞ արդյոք շարունակել համագործակցությունը դասղեկի հետ

-Այո - Ոչ այդքան -Ոչ

<u>Ստորագրելը պարտադիր չէ</u>

Հավելված 2

Հարցաթերթ (անկետա) սովորողների համար

1. Դպրոցում ես ինձ ազատ եմ զգում
2. Մեր դասարանի երեխաները ուրախանում են, երբ դասընկերները ցածր թվանշաններ են ստանում
3. Ես շատ եմ հուզվում, երբ ուսուցչի ասածը չեմ հասկանում
4. Ես գտնում եմ, որ դասերի ժամին ավելի շատ հանձնարարություն կարող եմ կատարել
5. Շատ եմ ուզում հանգստանալ
6. Եթե թույլատրվեր, ես հաճախ կբացակա էի դասերից
7. Դասարանում երեխաները շատ լարված հարաբերությունների մեջ են, հաճախ են վիճում
8. Ես միշտ վախենում եմ գնալ գրատախտակի մոտ
9. Իմ դասընկերները հարգանքով են ինձ վերաբերվում
10. Դպրոց գնալիս, հաճախ տրամադրությունս ընկնում է
11. Ես համոզված եմ, որ ծնողներս ինձ շատ են սիրում
12. Ինձ հաճախ թվում է, թե ես հիվանդ եմ
13. Ամբողջ օրը դասերին եմ նախապատրաստվում, օրս հազիվ է հերիքում
14. Երբ համեմատում եմ իմ դասարանցիներին մյուս դասարանների աշակերտների հետ, հասկանում եմ, որ ամենավատը մեր դասարանն է
15. Ինձ թվում է, թե ուսուցիչը ինձնից միշտ դժգոհ է
16. Ինձ թվում է, որ լավ չեմ տեսնում
17. Դպրուցում շատ հետաքրքիր է
18. Սովորաբար ես լի եմ ներգիայով

Պատասխանների կողքին նշեք «+» կամ «-» :